ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2014 թվականի մայիսի 27-ի նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար առաջադրված թեկնածուի («ՀՊՏՀ» ՊՈԱԿ ռեկտորի 09.04.2014 թ. N 24-Ա հրաման) ընտրության մասին հարցը:**

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կ. Լ. Աթոյան:**

Զեկուցողը նշեց. ֆինանսական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար առաջադրվել է ֆինանսական ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Զաքար Կնյազի Կիրակոսյանի** թեկնածությունը: Նրա թեկնածությունն առաջադրել են ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ու բանկային գործի և ապահովագրության ամբիոնները (որոշումներն ընդունվել են միաձայն)**:**

Զ.Կ.Կիրակոսյանը ծնվել է 1957 թվականի հոկտեմբերի 1-ին Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի Լեռնարոտ գյուղում: 1973-1978թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկա» բաժնում: Ստացել է մաթեմատիկոսի որակավորում: 1980-1986թթ. սովորել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1987թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002թ. ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Զ.Կ.Կիրակոսյանը 1978-1980թթ. աշխատել է Ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտում որպես ինժեներ-մաթեմատիկոս, 1987-1988թթ.՝ Կոոպերատիվ առևտրի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում. նախ՝ ավագ գիտաշխատողի պաշտոնակատար, այնուհետև՝ ավագ գիտաշխատող: 1988-1992թթ. աշխատել է Հայաստանի ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում որպես գիտաշխատող: 1992 թվականի մարտից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. 1992-2003թթ.՝ մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնում (այժմ՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն) որպես դոցենտ, 2003-2006թթ.՝ ինժեներատնտեսագիտական ֆակուլտետի (այժմ՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ) դեկան, 2006-2007թթ.՝ նույն ֆակուլտետի

դեկանի տեղակալ, միաժամանակ, համատեղությամբ աշխատելով ամբիոնում որպես դոցենտ: 2008 թվականից աշխատում է տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում որպես դոցենտ՝ մրցույթով անցնելու կապակցությամբ: 2012 թվականի հուլիսից մինչև 2013 թվականի նոյեմբերը զբաղեցրել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնը, իսկ 2013 թվականի նոյեմբերից մինչ օրս ֆինանսական ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատարն է: Զ.Կ.Կիրակոսյանը հրատարակել է 20 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսորներ Գ.Ի.Վարդանյանը, Ա.Բ.Սալնազարյանը, Լ.Հ.Բադանյանը, Ա.Լ.Ասլանյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ բարձր են գնահատում Զ.Կ.Կիրակոսյանի կատարած աշխատանքները. և՛ որպես ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան, և՛ որպես ֆինանսական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար նա իրեն դրսևորել է որպես գործի հմուտ կազմակերպիչ: Նշեցին, որ Զ.Կ.Կիրակոսյանն աչքի է ընկնում բարձր կարգապահությամբ, նպատակասլացությամբ, աշխատասիրությամբ, բանիմացությամբ, ուստի ընտրվելով այդ պաշտոնում նա կարող է իր նպաստը բերել ֆինանսական ֆակուլտետի բարգավաճման գործընթացին:

Հաշվի առնելով Զ.Կ.Կիրակոսյանի գիտահետազոտական, մանկավարժական, մասնագիտական, ուսումնամեթոդական աշխատանքի երկար տարիների փորձը, ինչպես նաև կոլեկտիվ ղեկավարելու փորձն ու կազմակերպական ունակությունները, գիտական խորհուրդը նպատակահարմար է գտնում Զ.Կ.Կիրակոսյանի թեկնածությունը դնել փակ գաղտնի քվեարկության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով ֆինանսական ֆակուլտետի դեկանի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները (կողմ՝ 54, դեմ՝ 3, անվավեր քվեաթերթիկ՝ 0)՝ համալսարանի **ֆինանսական ֆակուլտետի դեկանի պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Զաքար Կնյազի Կիրակոսյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

27.05.2014 թ.

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2014 թվականի մայիսի 27-ի նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար առաջադրված թեկնածուի («ՀՊՏՀ» ՊՈԱԿ ռեկտորի 09.04.2014 թ. N 24-Ա հրաման) ընտրության մասին հարցը:**

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կ. Լ. Աթոյան:**

Զեկուցողը նշեց. ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար առաջադրվել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մանուկ Էդվարդի Մովսիսյանի** թեկնածությունը: Նրա թեկնածությունն առաջադրել են ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, տնտեսամաթեմատիկական մեթոդների ու վիճակագրության ամբիոնները (որոշումներն ընդունվել են միաձայն):

Մ.Է.Մովսիսյանը ծնվել է 1976 թվականի հունվարի 7-ին Արագածոտնի մարզի Մաստարա գյուղում: 1983-1993թթ. սովորել և ավարտել է Թալինի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1993-1998թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ ՀՊՏՀ) ֆինանսահաշվային ֆակուլտետը: 1998-2000թթ. սովորել է ՀՊՏՀ-ի ասպիրանտուրայում: 2002թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009թ. ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Մ.Է.Մովսիսյանը 2001-2003թթ. աշխատել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում. նախ՝ որպես առաջին կարգի մասնագետ, այնուհետև՝ բաժնի պետ: 2003-2004թթ. համատեղությամբ աշխատել է «Մաքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ում որպես գլխավոր հաշվապահ, այնուհետև՝ ֆինանսական տնօրեն: 2003 թվականի մարտից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. վիճակագրության ամբիոնում որպես ասիստենտ, իսկ 2010 թվականից որպես դոցենտ՝ մրցույթով անցնելու կապակցությամբ: 2011-2012թթ. համատեղությամբ աշխատել է «Ռեգիոն» ֆինան-

սական արդյունաբերական կորպորատիվ ՓԲԸ-ում որպես աուդիտոր: 2012 թվականի հոկտեմբերից մինչև 2013 թվականի նոյեմբերը զբաղեցրել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը, իսկ 2013 թվականի նոյեմբերից մինչ օրս նույն ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատարն է: Մ.Է.Մովսիսյանը հրատարակել է 20 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, որից 12-ը՝ վերջին հինգ տարվա ընթացքում (1 ուսումնական ձեռնարկ, 19 գիտական հոդված, որից 2-ը՝ միջազգային ամսագրերում):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսորներ Վ.Ա.Սարգսյանը, Ա.Ա.Թավադյանը, դոցենտ Ա.Ա.Կոստանդյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ բարձր են գնահատում Մ.Է.Մովսիսյանի գիտական-մասնագիտական և կազմակերպական ունակությունները. և՛ որպես դեկանի տեղակալ, և՛ որպես դեկանի պաշտոնակատար նա իրեն դրսևորել է որպես գործի հմուտ կազմակերպիչ: Նշեցին նաև, որ Մ.Է.Մովսիսյանն իր գիտամանկավարժական աշխատանքը կատարում է մեծ պատասխանատվությամբ ու սիրով, վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Հաշվի առնելով Մ.Է.Մովսիսյանի գիտահետազոտական, մանկավարժական, մասնագիտական, ուսումնամեթոդական աշխատանքի փորձը, ինչպես նաև կոլեկտիվ ղեկավարելու փորձն ու կազմակերպական ունակությունները, գիտական խորհուրդը նպատակահարմար է գտնում Մ.Է.Մովսիսյանի թեկնածությունը դնել փակ գաղտնի քվեարկության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները (կողմ՝ 57, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0)՝ համալսարանի **ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մանուկ Էդվարդի Մովսիսյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

27.05.2014 թ.